ծելու իւր ուսումը Սիւնեաց Երնջակ գաւառի Ապրակունեաց վանքը «մեծ վարժապետ» Յոհան Որոտնեցու մօտ՝ ուսումնակից ունենալով իրեն հոմանուն՝ յետոյ մեծահռչակ Տաթևացուն, և մնաց այնտեղ ութ տարի. իսկ Յ. Որոտնեցու մահից (1386 թ.) յետոյ նա դարձաւ իւր բնիկ գաւառը՝ «իւր հոգևոր հարազատ և համշիրակ» գիտնական Սարգիս վարդապետի մօտ՝ Քաջբերունեաց Արճէշ քաղաքի Սուխարայ վանքը և տասն տարի «բազում աշխատութեամբ դեգերեալ», ստացաւ նորանից աստիճան վարդապետութեան։ Խլաթեցու կեանքից յիշուում է այնուհետև, որ նա ճանապարհորդել է վարդապետների և աշակերտների ուղեկցութեամբ դէպի Սուրբ քաղաքը (Երուսաղէմ), ուր կացել է երկու տարի։ Հաւանական է, որ այդ միջոցներին լինի վախճանած Սարգիս վարդապետը (1401—1402 թ.) որին՝ ինչպէս յայտնի է, յաջորդում է Սուխարայ վանքում նորա աշակերտ և Խլաթեցու ընկերակից Վարդան վարդապետը՝ Հոգւոց վանքի ուխտից. իսկ սորա մահից յետոյ, որ հանդիպեց Տոսպայ Սալնապատ վանքում, ուր հեռացած էր սա բարբարոս այլազգիների երեսից,—նոյն Սուխարայ ուխտի առաջնորդութիւնը վարեց կարճ ժամանակ